

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Թիֆլիսում լուր տարածուեց, թէ մեծ պասի երկրորդ շաբթին հիւր պէտք է գայ Բագուից հայ դերասանական խումբը. բայց, տարաբախտաբար, եկաւ մի մասը, այլապէս, երևի չէր էլ կարող լինել, քանի որ սա հայկական խումբ էր. իսկ հայը, անթիւ անդամ ասուած է՝ միութիւն չէ սիրում...

Կասկած չը կայ, որ Թիֆլիսի հայ հասարակութեան գոնէ այն մասը, որ հետաքրքրում է հայկական բեմով, ի սրտէ ու բախացաւ այս աւետաբեր լուրին, բայց Բագուի հայոց դերասանական խումբը կարծես դիտմամբ սառը ջուր ածեց նրանով հետաքրքրուողների վրայ և ուղեց ապացուցել, որ եթէ հասարակութիւնը չէ հետաքրքրուում հայոց թատրոնով—զրա պատճառը դերասաններն են:

Կար ժամանակ, երբ աջ ու ձախ մեր դերասաններից լուսում էին տրտունջներ ու բողոք հայ հասարակութեան անտարբերութեան համար դէպի մայրենի բեմը և մայրենի գեղարուեստը... Վերջապէս այդ լաց ու կոծին արձագանք տուաւ Բագուի հայ հասարակութիւնը, որ ապահովեց մեր դերասաններին. սակայն գնահատեց արդեօք այդ բանը հայ դերասանը. աշխատեց նա զարգանալ և առաջ գնալ... Մեր Բագուի հիւրերին տեսնելով, մենք կարող ենք պատասխանել—նչ։

Երջել թէ մեծ և թէ նոյն իսկ յետ ընկած գաւառական քաղաքները՝ ներկայացումների միջոցով ժողովուրդը զարգացնելու, նրան մայրենի բեմի գրուածների և տաղանդների հետ ծանօթացնելու նպատակով—զա գովելի, բայց միհնոյն ժամանակ ժողուար գործ է։ Ժողովուրդը կրթելու համար նամի կրթողը ինքը պէտք է կրթուած և նախապատրաստուած լինի, որ ծաղը ու ձանձրոյթ չը յարուցանէ կրթուողների մէջ, պէտք է կարողանայ ըմբռնել ժողովրդի պահնջները. իսկ մեր դերասանները ցոյց տուին, որ չը զիտեն ինչպէս հետաքրքրել հասա-

քակութիւնը, մինչդեռ թատրոնական գործի աջողութիւնը անպայման կապուած է այդ հետաքրքրութեան չափից:

Կար ժամանակ, երբ թատրոնական գործը մեզանում յենաւում էր մէկ կամ երկու անհամաների վրայ. Ժողովուրդը միշտ լինում էր թատրոնը, որովհետև խաղալու էր մի Աղամեան կամ մի Հրաշեայ, Բացի այդ, կլասիկ պիէմսերի մէջ լինում էին մէկ կամ երկու կենտրոնական դերեր: Ժամանակը փոխուեց, այժմ մի կողմից աչքի ընկնող մեծ տաղանդներ չունենք, իսկ միւս կողմից էլ ընթացիկ դրամատիկական զրականութեան մէջ տիրում է մի նոր հոսանք. տարէց տարի պակասում են այնպիսի պիէսների թիւը, որոնց մէջ կամ մէկ կամ երկու կենտրոնական դեր՝ և հետաքրքրող պիէսի ամբողջութիւնն է ու նրա մէջ արձարծուող ու լուծուող հասարակական խնդիրներն են գրաւում հասարակութեան ուշադրութիւնը: Ժողովուրդը նախ և առաջ տղում է տեսնել պիէսը և ոչ այս կամ այն դերասանի խաղը. իսկ այդպիսի պայմանների մէջ ակամայ առաջ է գալիս բեմիսորի անհրաժեշտութիւնը, որ մեծ խնամքով պէտք է վերաբերու դէպի ամբողջութիւնը, այսինքն տայ «անսամբլ», այլապէս ներկայ թատրոնական գործը միշտ կարող է կազմ:

Այդ ամբողջութեան, ի հարկէ, պիտի նպաստեն նախ դերասանները իրանց մտածած խաղով, իսկ միւս կողմից՝ խմբի բեմիսօրը պէտք է լինի անպայման բեմական գեղարուեստ իմացող և զարգացած մի անձնաւորութիւն. առկայն, տարաբախտաբար, ներկայ հայ խմբի մէջ յիշած պայմանները բացակայում են: Դերասանների մեծ մասը չունի մաքի և ճաշակի բաւականաչափ զարգացում, որ անդեկավար առաջ տանի գործը: Լաւ բեմիսօրը կ'ազատէր շատ սխալներից մեր դերասաններին: Զարգացած բեմիսօրը երբէք չէր ընտրի մի քանի ներկայացումների համար այնպիսի բեղերտուար, որ ձանձրալի է, անհետաքրքրական և սնբեմական:

Թիֆլիսում խաղացած պիէսները հետևեալներն են՝ «Մեղէա», «Սաֆօ», «Վերաքննիչ», «Իգէիլ», «Դօն-Քիշօտ», «Կեանքի արժէք» և «Մարտամ-Սան-Ժէն»: Վերոյիշեալ եօթը պիէսից ոչ մէկը, բացի «Կեանքի արժէք»-ից, մեր կեանքի հետ կապ չունեն: Դրանցից մէկը հռոմէական կեանքից է, միւսը՝ յունական, երրորդը՝ Բուդդայի, չորրորդը՝ Փրանսիական. մի խօսքով այնպիսի պիէսներ էին ընտրուած, որոնց մէջ մէկ կամ երկու նշանաւոր դեր կայ, իսկ բովանդակութեան կողմից (բացի երկուսից), եթէ կամնում էք, բոլորովին անհետաքրքրական և անմարսելի հայ ժողովրդի համար: Այդ պիէսները, իբր «կլասսիկ», ի հարկէ, լիքն են ճոճուան փրազներով, որ արտայայտելու հա-

մար այնքան հարկաւոր է հին շկօլայի գելլամացիան, բայց այդ բոլոր ֆրազներից խեղճ հանդիսականի գլուխը ոչինչ չէ մըտ-նում և սիրաը ոչինչ չէ զգում:

Մեզ թւում է որ այժմեան հայ թատրոնը պէտք է կրէ ժո-ղովրդական ընաւորութիւն և խումբը պէտք է աշխատէ ամեն կերպ մօտեցնել բեմական գործը ժողովրդին. բեպերտուարը պիտի կազմուած մինի ընտրութեամբ և միշտ մօտ իրական կեանքին:

Բայց գուցէ խումբը պիէտների պակասութիւնը լրացնում էր իր խաղով:

Տարաբախտաբար անսամբլի խաղն էլ չատ թոյլ էր, որովհետև զերասաններից ամեն մէկը չէր ստանձնում իրան յարմար գեր, այլ աշխատում էին գործը մի կերպ «եօլա-տա-ներ», իսկ ոյժերի պակասը լրացնում էին պատահական անձնա-ւորութիւնները: Այդ բաւանան չէ, զերասաններից շատերը չէին կարողանում կամ չէին աշխատում գոնէ ըստ կարելոյն մօ-տենալ հեղինակի նկարազբած անձնաւորութեանը, մարմնացնել նրան:

Համարձակ կարելի է ասել, որ վերոցիշեալ եօթը պիէսից Բազուկի խումբը վեցը տապալեց: Միայն «կեանքի արթէքն» էր, որ թէ ժողովուրդը հասկացաւ և թէ իրանք զերասանները ըմբռնեցին իրանց խաղակ ածը և բաւականութիւն պատճառեցին հասարակութեանը: Եւ դու չատ ընական է. պիէսը կենսական էր և մեզ բոլորիս ծանօթ կեանքից վերցրած:

Տիկին Սիրանոյցը անպայման տաղմանդաւոր զերասանուհի է և, ըստ երևոյթին, բեպերտուարը կազմուած էր տիկին Սիրա-նոյշի համար, այսինքն դրուած էին մի շարք այնպիսի պիէտներ, որտեղ մի ուժեղ կանացի գեր կայ, իսկ մնացած խումբը միայն իր խաղով պէտք է լրացնէր, մի տեսակ պարագաների գեր կա-տարէր: Հետաքրքրութիւնը կենտրոնանում էր տիկին Սիրա-նոյշի խաղի վրայ:

Կրկնում ենք, մեր զերասանների նիւթականը բաւակա-նաշափ ապահովուած է. մնում է որ նրանք ինքնազարգաց-մամբ կրթեն իրանց միտքը և ճաշակը, կատարեկապութեան ի-րանց ընդունակութիւնները, հասարակութեան համար հե-տաքրքրական պիէտներ ներկայացնեն և ունենան մի ընդունակ և լայն զարգացման տէր բեժիսօր, որ միացնէր և ուղղութիւն տար մեր զերասանական խմբին, թէ ինչ ահազին նշանակու-թիւն ունի տաղանդաւոր բեժիսօրը, դրան փառաւոր պապա-ցոյցը մենք տեսնում ենք Սոսկուայի Գեղարուեստական-Հասա-րակական թատրոնում, որ չորհիւ պ. Ստանիսլավիկու բեժիսօ-

րութեան զարձաւ ամբողջ Ռուսաստանի ամենասիրուած բեմը։ Իսկ որ Թիֆլիսի հայ հասարակութեան մէջ մարած չէ հետաքրքրութիւնը դէպի մայրենի բեմը—դրան ապացոյց երիտասարդ կ. Գալֆայեանի տուած ներկայացումը։ Ճիշտէ, որ պ. Գալֆայեանի բեմ դուրս գալը մի քիչ անսովոր առաջարան ունէր։ այդ գեռ սկսնակ արտիստ-արագիկի մասին շատ հակասական լուրեր և կարծիքներ էին տարածուել. պ. Գալֆայեանը նոյն իսկ լրագրական բանակուսի առարկայ էր զարձել... Սյովիսով գեռ բեմ չը դուրս եկած, նա յայնի էր արդէն։ Հասկանալի է, որ այդ հանգամանկըներում ինչ անսովոր հետաքրքրութեամբ էր սպասում ապրիլ Ե-ին, Թիֆլ. Արտիստ, Էնկ. թատրոնը լրցած հասարակութիւնը՝ վարագոյրի բացման։ Նրանք, որոնք տեսել էին «Համլէտ»-Ադամեանին, գուշակում էին Գալֆայեանի խայտասակուելը, կային և այնպիսիները, որոնք, ասէկուէներից ազգուած, թշնամական դիրք էին բռնել և սրտանց ցանկանում էին, որ տապալուի «յանդուզն» սկսնակը։ Գալֆայեանը մինչև այդ օրը բեմ էր դուրս եկել Պարիզ և Բագու «Համլէտի» և «Օթելլօի» միայն մի քանի տեսարաններում. առաջին անգամն էր նա խազում մի ամբողջ գեր։ Անկասկած հետո բան չէր այդ պայմաններում աջող կատարել մի այնպիսի բարդ և նուրբ հոգեկան դիմագիծ, ինչպիսին է Շեքսպիրի «Համլէտը», սակայն պ. Գալֆայեանը իր մի քիչ ինքնուրոյն խազով կարողացաւ գրաւել հասարակութեան ուշագրութիւնը և ցոյց տալ, որ զուրկ չէ տաղանդից։ Երիտասարդ գերասանին, բնականաբար պակասում է փորձառութիւն. բայց նա իր առաջ ունի շատ ժամանակ՝ անխուսվելի թերութիւնները լրացնելու և իր չնորհքը կատարելագործելու համար։ Մի բան, որի վրայ առանձին ուշագրութիւն պէտք է դարձնել՝ դա գերասանի ֆիզիկական թռւութիւնն է, որ կարող է լուրջ խոշնդրու դառնալ բնիմին ծառայելու համար։ Յամենայն գէպս հայոց գերասանական խումբը պէտք է զրկարաց իր մէջ ընդունի այդ նոր ոյժը։

Առհասարակ մի ընդունակ բեմիսօր կարող էր լինէր մեր ցիր ու ցան և անդեկապար բեմական ուժերից կազմակերպել բարձմակողմանի ուժերով օժտուած գերասանական մի խումբ, որ փոփոխակի խազալով Բագուի և Թիֆլիսի բեմի վրայ, կարող էր լինէր հաստատ ոտի վրայ գնել հայոց թատրոնական գործը մեզանում։ Գլխաւոր խնդիրը հմուտ, զարգացած և գործին նուիրուած բեմիսօր գանելն է։